



Ընդհանուր տեղեկատվություն

<p>Կազմակերպության տվյալներ</p> <ul style="list-style-type: none">• Անվանում, հասցե• Տնօրեն• Էլ. հասցե• Հեռախոս .	<p>«Մանակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան</p>
<p>Հետազոտության թեմա/վերնագիր</p> <ul style="list-style-type: none">• Հետազոտության թեմա	<p>Անգլերենի նորաբանությունների ուսուցում 6-րդ դասարանում</p>
<p>Ուսուցչի տվյալներ</p> <ul style="list-style-type: none">• Ա. Ա. Հ.• Մասնագիտություն• Հեռախոս• Էլ. հասցե• Դասավանդվող առարկաներ• Դասարաններ	<p>Տաթև Մուսեղի Խլիարյան Մանկավարժ Անգլերեն լեզու 3-9 դաս.</p>
<p>Ուսումնական հաստատության տվյալներ</p>	

- Անվանումը, հասցե
- Հեռախոս
- Էլ. հասցե (տնօրինության)
- Web կայքի հասցե

ՀՀ Կոտայքի մարզ, Նոր Հանրի Մեծն Մուրադի անվան N4
հիմնական դպրոց

Հետազոտության վերաբերյալ հաշտվելություն

<p>Նպատակը և հետազոտական հարցը</p>	<p>Հետազոտության նպատակը: Անգլերենի նորաբանությունների ուսուցումը առակերտների լեզվի յուրացման խթանման գործոն:</p> <p>Հետազոտական հարց: Ինչ մեթոդով կամ հնարներով կարելի է համադրել անգլերենի նորաբանությունների, դրանց ֆերականական կադապարների և արտասանության ուսուցումը 6-րդ դասարանում:</p>
<p>Թեմայի կարևորությունը և նշանակությունը Ձեր քերականության խմբի համար</p>	<p>Թեմայի կարևորությունը: Լեզվի մեջ նոր գործածվել սկսած՝ նոր երևան եկած բառ՝ բառակապակցություն կամ արտահայտություն: Տարբերակում են՝ բառային նորաբանություններ, որոնք իրենց հնչյունական կազմով և իմաստով բոլորովին նոր բառեր են և առաջին անգամ են գործածվում լեզվում, իմաստային նորաբանություններ, որոնք լեզվում արդեն եղած բառերն են՝ նոր իմաստներով: Նոր բառը լեզվում լայն տարածում ստանալուց հետո դադարում է նորաբանություն լինելուց Լեզվի մեջ նոր գործածվել սկսած՝ նոր երևան եկած բառ՝ բառակապակցություն կամ արտահայտություն:</p>
<td data-bbox="780 1308 1576 1379"> </td>	
<p>Ո՞ր առանցքային կոմպետենցիան է ուղղված նպատակի ուսումնասիրությունը</p>	<p>Սովորել սովորելու կարողունակություն</p>
<td data-bbox="780 1812 1576 1883"> </td>	
<p>Վերապատրաստման ո՞ր թեմայի շրջանակում է անդրադարձ կատարվել այս հիմնախնդրին/ուրախին</p>	<ul style="list-style-type: none"> ● Գնահատում ● Պլանավորում

Օգտագործված մեթոդները	<ul style="list-style-type: none"> Նախագծային մեթոդ
Իրականացման ժամանակահատվածը	Մեկ շաբաթ
Թիրախ խումբը /Ֆանակ, սեռային բաշխում/	Ճ-րդ դասարանի աշակերտներ
Իրականացման վայրը <ul style="list-style-type: none"> Դպրոցը Դասարանը 	<p>ՀՀ Կոտայքի մարզ, Նոր Հանրի Մեծն Մուրադի անվան N4 հիմնական դպրոց</p> <p>Ճ-րդ դասարան</p>
Գործընթացի համառոտ նկարագրություն /տպավորություններ, կարծիքներ, դժվարություններ/	<p>Հասարակական կյանքի, գիտության ու տեխնիկայի նոր երևույթները նկարագրելու համար անընդհատ առաջ են գալիս նոր հասկացություններ, որոնց համապատասխան եզրերը (եզրույթ, տերմին) դեռևս բացակայում են լեզվում: Այս կապակցությամբ ստեղծվող նորաբանությունները կա՛մ լինում են նորագույն փոխառություններ, կա՛մ էլ ստեղծվում են լեզվի ներքին միջոցներով՝ բառակազմական գործող կաղապարներով:</p> <p>Անգլերենում շաղկապական բաղադրությունները դասվում են այսպես կոչված բառակապակցական բաղադրությունների (phrase compounds) շարքին: Լ. Բառերը տարակուսում է՝ արքյոֆ սրանֆ իսկապես պետֆ է համարել բարդ բառե՞ր, քե՞</p>

Շարահյուսական կապակցությունների փարսցման, բառայնացման արդյունքում ստացված բաղադրություններ: Բանն այն է, որ սրանք այնպես, ինչպես հայերենում, միջին օդակ են բառակապակցությունների ու բարդությունների միջև: Սակայն, այնուամենայնիվ, ֆննվում են որպես բարդ բառերի մի առանձին տեսակ, քանի որ մեկ բառի արժեք ունեն. այստեղից էլ բառակապակցական բարդություն անվանումը:

Դրանց մի տեսակը կազմվում է հիմնականում **and** համադասական շղկապով, ինչպես՝ **bubble-and-squeak** «տապակած կարտոֆիլ և կաղամբ», **milk-and-water** «անգոր, բուլլ», **pepper-and-salt** «ալեխառն» և այլն: Բառակապակցական բարդությունների մյուս տեսակը է. Բլումֆիլդի առանձնացրած շարահյուսական բարդություններն են (**syntactic compounds**), որոնք կարծես նախադասություններից կամ խոսքաբանից պոկված հատվածներ լինեն. դրանք նախադասություններին և ազատ բառակապակցություններին բնորոշ կառուցվածք ունեն և համապատասխանում են անգլերենի շարահյուսական ու շարադասական կանոններին, ինչպես օրինակ՝ **jack-o'-lantern** «դդմե լապտեր», **state-of-the-art** «ժամանակակից, նորագույն» և այլն: Նախ գուցադրենք **and** շղկապով կազմված բաղադրությունները երկու լեզուներում: Հստակապես հարադրությունների բաղադրիչների իմաստային մերձության աստիճանի՝ երկու լեզուներում կարելի է առանձնացնել իմաստով առնչակից, հոմանիշ և հակահիշ գոյական բաղադրիչներով հարադրություններ, սակայն, ի տարբերություն հայերենի, անգլերենում հաճախ դրանց հարադրմամբ ստացվում են ոչ թե ուղիղ, այլ փոխաբերական իմաստներ արտահայտող հարադրություններ, ինչպես՝ **cats and mouse** «մուկ ու կատու խաղալը», **chalk and talk** «ավանդական ուսուցչակենտրոն ուսուցում», **dog and bone** «հեռախոս» և այլն: Այսպես, շղկապական հարադրությունները երկու

լեզուներում կարելի է բաժանել հետևյալ տեսակների. ա) Առնչակից իմաստ ունեցող բաղադրիչներով՝ ազգ ու հայրենիք, աղոթք ու աղաչանք, անձրև ու քամի, առուն ու ձմեռ, բակ ու դուռ, բառ ու խոսք, եղբայր ու քույր, թաք ու կրունկ, թուղթ ու գիր, խաղ ու պար, խոսք ու գրույց, ծառ ու 10 ծաղիկ, կար ու կուր, հանդ ու ձոր, հարց ու փորձ, հաց ու պանիր, շող ու շող, շուն ու գայլ, վար ու ցանք, ռոտ ու ձեռ, վարպետ ու բանվոր, ցախ ու ցաք, քար ու կեղևք և այլն: Անգլերենում՝ arts and crafts «արվեստներ ու արհեստներ», bed and board «օրևան ու սնունդ», bread and butter «ամենօրյա աշխատանքով վաստակած ապրուստ», bread and wine «հաղորդության ժամանակ հաճակվող արյուն ու գինի», cakes and ale «երկրային վայելք», doom and gloom «հուսահատություն, ընկճախոս», law and order «կարգ ու կանոն», man and boy «մանկությունից սկսած», milk and honey «ծաղկում ու բարգավաճում», oil and water «անհամատեղելի՝ կրակ ու ջուր» և այլն: բ) Հոմանիշ բաղադրիչներով՝ անդ ու անդաստան, անեծք ու նզովք, բաղ ու բախշա, բանտ ու զնգան, բար ու բերք, գանգատ ու բողոք, գուր ու կարեկցանք, դաշտ ու դուրան, դաս ու խրատ, դեղ ու դարման, դեպք ու դիպված, դող ու էրոցք, եռանդ ու ջանք, լույս ու հրագ, խաղ ու տաղ, ծոմ ու պաս, կապ ու կեղևու, կուշտ ու բուլբուլ և այլն: Անգլերենում՝ command and control «գինված ուժերի և նիզակավարում», house and home «տուն ու տեղը, եղածչեղածը», hue and cry «աղմուկ-աղաղակ, բողոք», hum and haw «տատանում, վարանում», pot and pan «ամուսին», rag and tatter «մաշված, ծակծկված» և այլն: գ) Հակահիշ բաղադրիչներով՝ ասել ու ջահել, աղբատ ու հարուստ, ամառ ու ձմեռ, անեծք ու օրհնանք, աջ ու ձախ, առք ու վաճառք, գիշեր և ցերեկ, դար ու դուրան, լուս ու մութ, խինդ ու լաց, ծեր ու մտուկ, ծով ու ցամաք, կենաց ու մահու, մահ ու կյանք, սուտ ու ճիշտ, ստրուկ ու տեր, վերջ ու սկիզբ, վիշտ ու

	<p>ժպիտ, սեր ու ծառա, տիվ ու գիշեր և այլն: Անգլերենում՝ alpha and omega «սկիզբն ու վերջը, boom and bust «վերելք ու անկում», day and night «օր ու գիշեր», ebb and flow «մակընթացություն և տեղատվություն», left and right «աջ ու ձախ», life and death «կենաց ու մահու», light and shade «լույս ու ստվեր», wax and wane «վերելք ու անկում» և այլն:</p>
<p>Վերհանված՝</p> <ul style="list-style-type: none"> • Արդյունքներ/արտադրանք • Եզրակացություններ 	<p>Նորաբանություն, լայն առումով՝ լեզվի մեջ երևան եկած և դեռ ֆազալացիայի իրավունք չստացած նոր բառեր, իմաստներ, դարձվածքային միավորներ, ինչպես նաև ռեալիզմի ու ֆեռալիզմի իրողություններ, նեղ առումով՝ լեզվի յուրաքանչյուր էվոլյուցիոն փուլում գործածվող այն բոլոր նոր բառերը, որ կազմվում են նոր հասկացություն արտահայտելու կամ նոր առարկա, երևույթ, հատկանիշ ևն նշանակելու համար:</p> <p>Նորաբանությունների մեջ առնում են նաև նորագույն փոխառությունները: Տարբերակում են՝ բառային նորաբանություններ, որոնք իրենց հնչյունական կազմով և իմաստով բոլորովին նոր բառեր են և առաջին անգամ են գործածվում լեզվում, իմաստային նորաբանություններ, որոնք լեզվում արդեն եղած բառերն են՝ նոր իմաստներով: Նոր բառը լեզվում լայն տարածում ստանալուց հետո դադարում է նորաբանություն լինելուց:</p> <p>The pattern may have been triggered by the word feminism which denoted the movement for recognition of women’s claims to equal rights with men. It was followed by sexism – discrimination and prejudice against women.</p>

Since it became strongly linked with specifically anti-female prejudice, the term genderism appeared denoting unfair discrimination against either sex. The notion of discrimination is found in ageism – a bias against the old simply because they are old, ableism – unfair discrimination in favour of able-bodied people, alphabetism – (used somewhat ironically) discrimination on the grounds of the alphabetical place of the first letter of one's surname, fattyism – discrimination against or ill-treatment of fat people, heightyism – discrimination on the grounds of height, specifically unfair treatment of tall women and short men.

Օտարալեզու բառերը հաճախ մտապահվում են մայրենի լեզվի բառերի նմանությամբ: Մա մի փաստ է, որ անմիջականորեն կապվում է լեզուների ծագումնաբանական ընդհանրությունների ու լեզվական փոխառությունների հետ: Բառերի գործառույթը նրանց նշանակությունն ու վերաբերությունն է: Փորձառու լեզույորացիները տարբերվում են բառիմաստների «ենթադրական իմացությամբ» ու հանաչողական ստրատեգիաների կիրառմամբ:

Ճանաչողության հարցերին անդրադարձող գիտնականները այն ընդհանուր համոզմունքն ունեն, որ ընկալմա հիմքում հիշողության գործընթացներ ու կառուցվածքներն են, իսկ իմաստային հիշողության հիմքը կազմում են հակացություններն ու նրանց միջև գոյացող հարաբերությունները:

Մարդու հանաչողական կարողություններն արտացոլվում են լեզվի վերլուծության ընթացքում, իսկ լեզուն կազմակերպում է գիտելիքը: Հասարկական ու անհատական փորձի անընդհատ

համագործակցության արդյունքում լեզվի յուրացումն ազատվում է իրադրական համատեքստից ու ձևավորում իր սեփական կանոնները: Վերը շարադրվածն անմիջականորեն կապվում է լեզվի յուրացման ու գործածման հետ, հատկապես, վերլուծության և նախաչոդական գործունեության առումով:

Վերլուծությա ու գիտակցման գործընթացները կապվում են ներակա և արտակա գիտելիքի հետ: Ներակա է ներհայեցողական տեղեկությունը ներառում է լեզվի «գիտակցված գիտելիքը», այսինքն՝ բառացի ձևակերպվող կանոնները: Չնայած գիտելիքի երկու տեսակն էլ արտահայտվելու ընթացքում օգտագործվում են առաջին և երկրորդ լեզվով խոսող անհատների կողմից, երկրորդ լեզվի կիրառության բարդությունների դեպքում լեզվակիրներն ավելի հաճախ հենվում են արտակա գիտելիքի վրա:

Խոսքը բնութագրում է մարդուն, քանի որ նրանում ի հայտ են գալիս մարդու յուրահատկությունները: Խոսքի ուսումնասիրությունն անկասկած, ենթադրում են նրա յուրացման արտալեզվական գործոնների, մասնավորապես, յուրացնողի անհատական հատկանիշների ֆննումը:

Հայտնի են, որ անհատի մեջ ընդհանրացնում են մարդու մասին բոլոր գիտությունների հետաքրքրությունները, իսկ խոսքային անհատի մեջ ններթափանցվում են լեզվի ուսումնասիրման բոլոր հայեցակետերը: «Խոսքային անհատ» հասկացության ֆննումը բացում է մարդուն վերաբերող գիտությունների միջև եղած բոլոր սահմանները, քանի որ հնարավոր չէ ուսումնասիրել մարդուն լեզվից անկախ և լեզուն՝ անկախ կրողից: Ինչպես անհատը, առհասարակ, այնպես էլ խոսքայինը, այդպիսին չի ծնվում:

Անհատի օնթոգենեզը նրա կազմավորմանը և ձևավորմանը գործընթացն է՝ ծննդից մինչև մահ: Խոսքային անհատը հասարակական անհատի այնպիսի համահարաբերականն է, ինչպիսին իրավական, սոցիալական կամ էթնիկական անհատներն

են: Խոսքային անհատի լեզվաբանական ֆնկցիոնը կարելի է տանել երեք հիմնական ճանապարհներով՝ հոգելեզվաբանության, մեթոդաբանության և գեղարվեստական գրականության օգնությամբ:

Ժամանակակից հոգելեզվաբանությունն իր ուշադրությունը կենտրոնացնում է լեզվախոսքային գործունեության ուսումնասիրության վրա՝ լեզվական գիտակցության նորմերի բացահայտման նպատակով: Լեզվական անհատին անդրադարձ է արվում միայն լեզվական օնթոգենեզի կամ լեզվի ու մտածողության կապերի օրինաչափությունների ֆնկցիոնալ նպատակով:

Խոսքային անհատի մեթոդաբանական ուսումնասիրությունները ամենահին են: Նման հետազոտություններին հատուկ է խոսքային անհատի՝ որպես homo-*loguens*-ի, իսկ լեզվի գործածումը՝ որպես մարդկային ցեղին հատուկ ունակության դիտարկումը: գեղարվեստական երկի իջոցով խոսքային անհատի առանձնահատկությունների վերհանմանը նվիրված են Վ. Վինոգրադովի աշխատությունները: Խոսքային անհատի ներքին ֆնկցիոնը տարվում է նաև մշակութամեթոդաբանական տեսանկյունից: Այս մոտեցման համար էլակետային են համարվում որոշակի առանձնահատկություններ պայմանավորված են ոչ թե մարդու էությամբ, այլ մշակույթով: Այսինքն՝ անհատական համակարգը ոչ այլ ինչ է, քան մարդու զարգացման ընթացքը ներառող մշակութային համակարգ:

Պետք է նշել, որ, ըստ Յու. Կարաուլովի հնարավոր չէ հստակ գուգահեռ անցկացնել խոսքային անհատի ու ազգային տիպի միջև: Սակայն, ինչ խոսք, այն տրամաբանորեն առկա է և արտացոլվում է նրանում, որ երկուսի դեպում էլ ազգայինի կրողը ժամանակագրական առումով կայուն է: Ազգայինը փարձի փոխանակման ու բազմադարյան պատմական զարգացման

արդյունքն է: Այն յարավի է ներթափանցում խոսքային անհատի ձևավորման բոլոր փուլերը:

Այսպես, գրոյական փուլում անհրաժեշտ է հասցիլի առնել լեզվի այդ ժամանակահատվածի կառուցվածքային տվյալները: Հարկ է չանտեսել լեզվական հանրության հասարակական ու հանրալեզվաբանական բնութագիրը և ֆննել այլևի նեղ հոգեբանական տեղեկությունները, որոնք խոսքին անկրկնելի հուզական և էթնիկական երանգ են հաղորդում: Փաստորեն, խոսքային անհատի ամբողջական վերլուծությունը ենթադրում է տվյալ անհատի աշխարհընկալման կադապարի, նրա մոտիվների, նպատակային ուղղվածությունների վերհանում: Անհատի խոսքի գործառույթի չափաիշերի վերհանումը բարդ է, սակայն շատ արդիական է:

Անհատական խոսքը տարբերվում է ծավալով ու բառապաշարով, ֆերականական կառույցներով ու ամբողջական կամ առանձի հնչյունների արտահայտման միջոցներով, ներքին խոսքի բնույթով:

The suffix *-ship* seems to fuse with the semi-suffix *-man* in some coinages to form a compound suffix *-manship*. The suffix *-ship* normally forms nouns of collective meaning, like *viewership* – television watchers, or *ridership* – all the passengers on some kind of transport, but now it often appears in combination with *-man* when a separate stem with *-man* has not been registered. This compound suffix adds some ironic colouring to the coinage, e.g. *looksmanship* – the art of maximising one’s visual appeal, *gamesmanship* – the art of winning by doubtful though not legally prohibited means.

The suffix -y/-ie needs some more consideration. It remains active and retains its colloquial colouring but it has acquired the meaning of “an obsessive enthusiast”, e.g. druggie – a drug addict, winie – a person with an obsessive interest in wine, deccie – a person obsessively interested in interior decoration and compulsively redecorating his/her flat, Cuppie – a wealthy middle-class devotee of yacht racing etc.

Acronymy is highly popular in Modern English. Some of the acronyms combine with the suffix -y/-ie. The acronym Yuppie – young urban professional + the suffix -y/-ie turned out to give rise to numerous words of the type, e.g. buppie – black yuppie, yeepie – youthful energetic elderly people involved in everything, pippie

- Բնական մոտեցում (Natural approach)

Շեշտը դրվում է այն հասկացության վրա, որ սովորողը կարող է սովորել ամեն ինչ: Ցանկացած նոր դաս պետք է հիմնված լինի նախորդ դասի վրա և լինի մտաչելի յուրացման համար:

- Ֆիզիկական արձագանքման մեթոդ (Total Physical Response)

Առաջին փուլում սովորողները պասսիվ ընկալում է նյութը՝ առանց այն օգտագործելու: Երկրորդ փուլում նրանք պետք է արձագանքեն որոշ բառերի, հասկապես բայերին, օրինակ, դրանք կատարելով: Եվ միայն այս երկու փուլը հաղթահարելուց հետո միայն սովորողներն իրենք են գործածում յուրացրած նյութը:

	<ul style="list-style-type: none"> ● <u>Կարդալու և պատմելու մեթոդ (Teaching proficiency trough Reading and Storytelling)</u> <p>Համարվում է Ֆիզիկական արձագանքման մեթոդի ենթահյուս։ Դասավանդողը հարուստ բառապաշարով փոփոխական պատմություններ է պատմում սովորողներին, հետո էլ հարցեր տալիս պատմության վերաբերյալ։ Վերջիններս պետք է պատասխանեն հարցերին օգտագործելով նյութի բառերը։</p> <ul style="list-style-type: none"> ● <u>Դոգմա մեթոդ (Dogme language teaching)</u> <p>Այս մեթոդը հրաժարվում է լեզվի ուսուցման ընթացքում որևէ դասագիրք օգտագործելուց՝ շեշտադրելով դասավանդող-սովորող շփումը։ Ուսուցողական նյութերը, որոնցից պետք է օգտվի սովորողը հենց իր կողմից ստեղծված նյութերը պետք է լինեն։</p>
<p>Այլ տեղեկատվություն</p>	<p>«Օտար լեզուներ» բնագավառի վերջնարդյունքների, դիրքորոշման և արժեհամակարգի մասին խոսելիս մեծ կարևորություն է տրվում բազմալեզվության և միջմշակութային իրազեկության խթանմանը։ Մեր կրթահամալիրի կրտսեր դպրոցներում պարտադիր են անգլերենի և ռուսերենի ուսուցումը։</p> <p>Պետական չափորոշում բնագավառը շեշտադրում է աշակերտի՝ բազմալեզու հաղորդակցության ժամանակ ախտիվ սոցիալական դերակատար լինելը, որտեղ օտար լեզուներով հաղորդակցությունը օգնում է աշակերտին ճանաչել աշխարհը և այլ մշակույթներ, իր մշակույթը ներկայացնել այլ լեզուներով,</p> <p>Կրտսեր դպրոցում ես իրականացնում եմ հաղորդակցական կարողությունների զարգացմանը նպաստող մի շարք նախագծեր.</p>

Օրինակ՝ «Հաղորդակցական ընտանեկան նախագծեր», «Սուրբ Ջատիկը իմ ընտանիքում»: Հովհաննես Թումանյանի հեփիարները պարզ անգլերենով թարգմանում են անգլերեն և բեմադրում դրանք:

Սովորողի բնագում, դպրոցի ենթակայքում հրապարակվում են սովորողի կատարած թարգմանությունները օտար լեզուներից հայերեն և հակառակը՝ հայերենից օտար լեզուներ: Այս առումով հատկապես ուզում են նշել «My Info Planet – Իմ տեղեկատվական մոլորակը» իմ թարգմանական նախագիծը 6-րդ դասարանցիների հետ: Այս նախագծով սովորողները աշխատանքային մեծ քայլ են կատարում:

Օտար լեզվի յուրացումը առանձնանում է ոչ միայն յուրացվող նյութի բովանդակությամբ, այլև գիտելիքի լեզվական համակարգման նոր բնույթով: Լեզվական կարողությունը չի սահմանափակվում միայն լեզվի այս կամ այն կառուցվածքի ընկալմամբ: Բանավոր կամ գրավոր հաղորդակցման համար անհատը պետք է ընդհանրացնի հնչյունաբանական, ձևաբանական, իմաստաբանական, ֆերականական համակարգերի գիտելիքները:

Եթե լեզվի բառային կողմից ուսուցումը սովորաբար արտաբերման փուլից է սկսվում, որին հաջորդում է բառաձևի մտապահման վարժանքը, ապա իրական խոսքում հիշատակողն է լինում, սկզբից ինչ-որ միտք առաջացնող մտիվն է գոյանում, հետո միտքը, որն էլ այնուհետև ձևավորվում ու միջնորդավորվում է ներքին խոսքում: Մտիվն այն օբյեկտն է, որը համապատասխանում է անհատի պահանջմունքներին և ուղղորդում է նրա գործունեությունը: Օտար լեզվի բառապաշարի յուրացման գործընթացում մտիվն արտալեզվական դրդիչն է, որն արթնացնում է սովորողներին:

Հետևաբար այն առաջացնում է նոր բառերի պահանջմունք խոսքային մտադրությունը բավարարելու համար: Խոսքային մտադրությանն անդրադառնալիս տեղին կլինի Լ. Վիգոսկու այն

	<p>արտահայտությունը, որում նա միտքը համեմատում է անձրևի պատրաստվող ամպի հետ: Սակայն իրականում խոսքի բառային կազմն ուսուցանելիս առաջնություն է տրվում «անձրևի կաթիլներից ամպ կազմելուն»:</p> <p>Լեզուն արտաքին իրողությունները և մարդու ներաշխարհը կապող օղակն է: Լեզվի մասնագետները տարիներ շարունակ լեզվի յուրացման խնդիրները ելակետային են համարել տարբեր տեսությունների մեկման գործում:</p> <p>Անժխտելի է լեզվի յուրացման առանձնահատկությունների վերհանման անհրաժեշտության արդիականությունը: Լեզվի յուրացման մեխանիզմները պարզելուց առաջ անհրաժեշտ է մեկ անգամ ևս անդրադառնալ խոսքի օնոգենեզին, այն է՝ երեխայի խոսքի ձևավորմանը:</p>
<p>Հասկացողության կցված նյութեր</p> <ul style="list-style-type: none"> • Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ) • Նկարներ • Արդյունքներ 	

Օգտագործված գրականության ցանկ

1. Modern English, Second Edition, by Marcella Frank. Regents/Prentice Hall 1993
2. Martha Kolln, Rhetorical Grammar: Grammatical Choices, Rhetorical Effects, 5th ed. Pearson, 2007

3. Thomas P. Klammer, Muriel R. Schulz, and Angela Della Volpe,
Analyzing English Grammar, 5th ed. Longman, 2007